



Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 28

22 հունիսի 2017 թվականի

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ
«ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ
ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 26.01.2017 թ. N 4/7.1 որոշմամբ կատարված առաջարկը, ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 42-րդ կետի 5-րդ և 49-րդ կետի 2-րդ ենթակետերով, ինչպես նաև Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Աստվածաբանության ֆակուլտետում ստեղծել «Միջմշակութային կրոնագիտական հետազոտությունների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

Ս. Սարգսյան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ N 4/7.1

26 հունվարի 2017 թվականի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ «ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ» ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 49-րդ կետի 2-րդ և Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետերով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Առաջարկել Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդին՝ Երևանի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետում ստեղծել «Միջմշակութային կրոնագիտական հետազոտությունների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ



Ա. Ա. ՍԻՄՈՆՅԱՆ